

կայացնեն Գանտիա քաղաքը, մին 'ի ցամաքէ և միւսն 'ի ծովէ. շինուած է գեղեցիկս 'ի հիւսիսային ափունս, և նաւահանգիստ ունի Միջերկրականի վրայ, մերձենալի միայն փոքրիկ նաւաց: Ունի գրեթէ 15,000 բնակիչ, իսկ բոլոր կղզւոյն բնակիչն է 200,000:

Բարեբեր է Գանտիա, և կը բերէ առատութեամբ ցորեան, գինի, իւղ, լեմն, նարինջ և ուրիշ ամեն տեսակ պտուղներ. առատ է նաև մեղրը, և շատ աւելի հոշակաւոր սապոնը: Թէպէտ երկիրն ընդհանուր լեռնոտ է, բայց ունի և իր հովիտները ու գաշտավայրեր:

ԱՒԵՐԱԿ ՍՈՓԱԼԱՅ ՅԱՓՐԻԿԷ

ՆԻ ԴՐԱՆՍՎԱՄԱ

ԺԶ դարուն սկիզբները Բորգոյայցիք առաջին նաւարկողը որով և տիրողը եղան Ափրիկէի հարաւային ափանց, երկու կողմին ալ՝ արևելեան և արևմտեան. իրենց քարոզիչք և պատմիչք շատ հետաքննական տեղեկութիւններ աւանդեր էին այն անծանօթ երկիրներուն վրայ, որք քիչ ատենէն դարձեալ անայցելու մնալով յԵւրոպացւոց՝ նոյնպէս ալ անծանօթ մնացին, և տըրուած տեղեկութիւնք ալ անստույգ և երկբայելի համարուեցան: Այսպիսի տեղեկաց և տեղեկութեանց մէկն ալ էր Սոֆալայ՝ ոսկեբեր երկրին վրայ, յարևելեան ափունս, հարաւային լայնութեան 18-22 աստիճանաց միջոց, զոր համարէին Ս. Գրոց մէջ յիշեալ և Սոլոմոնի հարստութեանց աղբիւր՝ Սովփերայ կամ Սոփալայ երկիրը. ուր և կ'ըսէին քարոզիչքն, թէ Զիմպաթէ ըսուած տեղ մը մեծամեծ և զարմանալի շինուածք կան 'ի փրնիկեցւոց կանգնեալ: Այս բանս մեծ խնդրոյ առիթ

մ'եղած էր գիտնոց. ոմանք կը հաւանէին ասոնց ըսածին, այլք ոչ, զՍովփեր կամ Սոփալ գնելով յԱրաբիա կամ 'ի Հնդկիս, ուր Սողոմոնի վաճառականաց բերած բերքերն առատութեամբ գրտնուին: Արդ երեք տարի առաջ, 1871, 'ի հինգ սեպտեմբերի, Մաւիս կամ Մօխ (Mauch) Գերմանացին իր խուզարկութեանց ատեն 'ի կողմանս Սոփալայ, ընդ 20° 14' հարաւային լայնութեան, գտաւ մեծագործ շինուածոց մնացորդներ 'ի Զիմպաթի կոչուած տեղ մը, որ է Զիմպաթէ (կամ Նիմպաթէ) Բորգոյայց. երկու կողմ շինուածոց, կարծր և աղւեսաձև կտրուած կոփածոց քարամբ, առանց չաղախի շարուած. մը նապեալ պատերն 3 մեղրաչափ հաստութիւն ունին վարի կողմը, 2 1/2 վերի կողմը. աշտարակ մը կայ 10 մեղրաչափ, վարի կողմը բոլորակ, դուխն կռնած. ուր թուին իբրև ամրոց շինուած 'ի պաշտպանութիւն ոսկեհանից, որոց նշանքն դեռ կ'երևին: Զիմպաթի առունն ալ տեղացեաց մէջ արբոնիք նշանակէ: Քանդակներն խոշոր, այսինքն անարուեստ են, որով ոչ փրնիկեցւոց կամ շատ կիրթ ազգի մը գործ երևի, և ոչ ալ տեղացի Սևերու. անոր համար ոմանք իբրև միջին ճամբայ՝ Արաքացւոց գործ կը համարին զանոնք, չկարծելով որ այնքան նոր մնային եթէ 3000 տարի յառաջ կանգնուած ըլլային 'ի փրնիկեցւոց և 'ի գործակցաց Սողոմոնի: Բայց դեռ քննութեան տակ են Մաւիսայ գիտք: Իսկ ինքն Գերմանացի գտողն շատ տարիներէ վեր Զամպէղի գետոյն և Դրանսվալ ըսուած հասարակապետութեան միջոցի երկիրները կը քննէ, շատ և նոր լոյս տալով այն անծանօթ մնացեալ կողմանց. և մեծ հետաքրքրութեամբ կը սպասուի իր բաղմամբայ հաւաքեալ ծանօթութեանց հրատարակմանը:

Յիշեալ Դրանսվալն նոր հաստատուած հասարակապետութիւն մ'է Եւրոպայի վաճառական դաշլթականաց, իբրև 25 կամ 30,000 անձանց, և իբր 250,000 տեղացեաց, որոց ցեղն

Պեշուանտ կոչի ։ Գաղթականը օրինօք հաստատած են ամենքնին ալ պարտաւորելու ՚ի զինուորութիւն, 16 տարեկանէ մինչև ՚ի 60 տարեկան . և զլիաւորներն որ ընարուին չեն կրնար հրաժարիլ բայց եթէ տուգանք տալով, տեղակալն 25 դալէռ, հրամանատարն 100, ընդհանուր հրամանատարն 200, Հասարակաց եկամուտն իբրև կէս միլիոն ֆրանգ է ։ Ամեն երիտասարդ որ ունենայ սայլ մը, հրացան, 8 կամ 10 եզն՝ օրինօք կրնայ ամուսնանալ ։ Մեծ մասն արուեստաւորք են ատաղձագործք, 8 մեզր երկայնութեամբ փայտեր կը կտրեն, և հատն իբր 12-15 ֆրանգի կը վաճառեն ։ Քիչ երկրագործքն կը մշակեն մայիլ և ցորեն ։ Գլխաւոր պաճառքնին է փղոսկր և ռնգեղջիւրի ոսկր, ժանիք գետածիոց, մորթք կենդանեաց, բամբակ, խսիր, եզն, և այլն . զորս սովորաբար Անգղիացի գաղթականաց կը վաճառեն ։ Իսկ իրենք կ'ընդունին առնոցմէ վառօդ, զէնք, կապար, անագ, գաֆէ, չաբար, հնդկային կտաւ, զգետ, զլիսարկ, դեղորայ, և այլն ։ Երկիրն կը բերէ առատ արմրտիք և բանջարեղէն, խաղող, թուզ, գեղձ, նարինջ, գետնախնձոր, լուբիա, և այլն ։

ԴԱՐՁ ՍԱՄՈՒԷԼԻ ՊԵՅՔԸՐԻ ՅԱՆԳՂԻԱ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՐՇԱՊԱՆԱՅՆ Ի ՎԵՐԻՆ ՆԵՂՈՍ

Զորս հինգ տարիէ վեր թէ քաղաքական և թէ ուսումնական օրագիրք երբեմն երբեմն կը յիշէին Սամուէլ Պէյքըր Անգղիացի հռչակեալ ուղևորը, որ Եգիպտոսի խելտիվին Համար կարևոր գործոյ մը ձեռք զարնելով՝ անկէ զօրավար և փաշայ ալ առնանեցաւ ։ Պէյքըր ասկէ տասն տարի առաջ աշխարհագրական քննութեանց համար իր տիկին ամուսնոյն հետ Ալիքիէի խորքեր մտնէր, Նեղոս գետի վերին հովտաց մէջ, անոր աղբիւրները գտնալու, և

գտաւ մեծ և ընդարձակ լճեր, որոյ համար շատ ալ հռչակուեցաւ յԵրոսլա . բայց ինքն նման խիսկադոնի և այլոց, կ'ուզէր աւելի գտնել և աւելի ստուգել այն զեռանձանօթ կամ սակաւածանօթ անտառատաց մէջ, ուր կէս դարէ վեր շատ գիտնական ուղևորք կը յաճախեն, և ոչ սակաւք կամ ոչ աննշանք զոչ ալ եղան իրենց փախարին չհասած՝ բնական կամ բռնի մահուամբ ։ Ինութիւն և բոնութիւն երկու մեծ արգելք կամ զժարութիւնք են Ալիքիէի հետաքոտութեանց . առջինէն՝ ուղևորք կարելոյն չափ հոգալով և զգուշանալով (ի տօթոյ, ջրոյ պահութենէ, ճամբաներու գէլութենէ, գաղաններէ, և այլն), աւելի քիչ վախ ունին քան երկրորդէն, որ է մարդկային բռնութիւն . Գայտ է որ Ալիքիէի խորքն ինքնագլուխ բարբարոս կամ անկիրթ ժողովուրդք կան, որք զանազան պատճառաւ կ'արգիլեն Երոսլայի հետախոյզ ուղևորները, և երբեմն մահուամբ ալ ։ Գլխաւոր պատճառաց մէկն ալ է զգուշի վաճառքն գերեաց . բարբարոսքն կամ անգութ ազակ վաճառականք՝ իրենց մեծ և պիղծ չափ աղբիւր բրած են աւելի հանգարտ և ընտանի ցեղերու երիտասարդները, թէ այր թէ կին, որսալ իբրև երէ վայրի, բռնել խաբէութեամբ և ծախել ուրիշներու, որք և զանազան աշխարհներ կը տանին խեղճերը աւելի կամ պակաս տառապանօք ծառայեցնելու ։ Վերջի տարիներու Երոսլայի տէրութեանց բրած ջանքն այսպիսի անվայել գործք զաղբերելու՝ յայտնի է հասարակաց . Սամուէլ Պէյքըրի վերջին արշաւանքն կամ աշխատանքն ալ եղաւ այս բանիս համար, կամօք և օգնութեամբ Եգիպտոսի խէտիվին . և անալ այս աշխատանքի յետք է մեր գրիլիքն ալ, համառօտելով նոյն ինքն Պէյքըրի տուած համառօտ տեղեկութենէն ։

Այս անգղեկութիւն հանդիսական կերպով մը տուաւ Պէյքըր անցնալ տարւոյն վերջը, յ' 8 ղեկտեմբերի, յԱլիքիէէ նոր դարձած, ՚ի ժողովի հռչակաւոր Աշխարհագրական Ընկերութեանն լոնտոնի, ուր այն իրիկունք բաց ընկերաց՝ ժողովրդ էին բաղմութիւն գիտնական և պատուական անձանց, որոց զլուխ Անգղիոյ Թագաժառանգն և իրեղբայր Խորմալուրկի զուքս՝ արքայազուր . որոց ներկայացուց զուղևոր՝ ժողովոյն Նախագահն Պարզլ Ծրէր . և յետ իր և ասոր կարճ յառաջաբան խօսից՝ Պէյքըր սկսաւ խօսիլ և պատմել . յիշեցընելով ինքն որ խորին Ալիքիէի կամ Վերին Նեղոսի երկիրներու մէջ կան իբր 10 կամ 15,000 գերիտրսակք՝ Ստանանի կամ